ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՆԱԽԱՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՋՐԱԲԱՇԽԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՐԱԳՐՎԱԾ ԳԾԱԳԻՐԸ

Մ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Արագածոտն պատմական գավառի հնագիտական հետազոտության ընթացքում 1909 թ. պրոֆ. Ն. Մառը հայտնաբերել էր ջրի պաշտամունքին նվիրաբերված, խոշոր քարերից քանդակված գլանաձև արձաններ՝ ձկան պատկերով։ Անցյալում նման քանդակներ հայտնաբերված են եղել նաև Գեղամա լեռներում, Թուխարավան (Վրաստան) և Թոխմախան (Գառնի) լճերի շրջակայքում, ինչպես նաև Սևանի լիճների ցածրադիր մասերում և այլուր։ Երկարամյա հնագիտական հետազոտությամբ պարզվել է, որ այն բոլոր վայրերում, ուր գտնվելիս են եղել ձկնակերպ քանդակներ, հետագայում հայտնաբերվել է հնադարյան ոռոգման համակարգ, որովհետև այդ ձկնակերպ արձանները կապված էին ջրի պաշտամունքի հետ և նվիրաբերվում էին ջրի աստվածներին՝ ոռոգելի հողագործության պաշտպաններին։ Այս փաստերի հիման վրա պրոֆ. Մառը համոզմունք է հայտնել, որ պատմական Արագածոտնում ոռոգելի հողագործություն վարելու համար գոյություն է ունեցել ջրանցքների, առուների ու ջրամբարների համակարգ[1]։

Երեսնական թվականների սկզբներին պրոֆ. Ա. Քալանթարը մանրամասն ուսումնասիրելով պատմական Արագածոտնի նախնադարյան ջրաբաշխական համակարգը, վերականգնել է այդ ջրանցքների, առուների և ջրամբարների, ինչպես նաև շինարարական այլ կառույցների փոխադարձ դասավորությունը, ուղղություններն ու ընթացքը։ Դրանով իսկ հայտնաբերվել է նախնադարյան ջրաբաշխական այն համակարգը, որ ժամանակին ոռոգել է Արարատյան դաշտի հողերը՝ Արագածի լեռնալանջերում պահեստված ձնհալի ջրերի միջոցով։ Պրոֆ. Ա. Քալանթարը պարզել է, որ Արագածոտնի հնագույն բնակիչները ոռոգելի հողագործություն կիրառելու նպատակով ջրանցքների հատուկ ցանց են կառուցել՝ սկսած Արագածի գագաթնամերձ մասերից դեպի մշակովի հողատարածությունները, ըստ որում բնական գոգավորություններում կառուցվել են ջրամբարներ՝ ձնհալի ջրերը կուտակելու նպատակով։ Մինչև մեր օրերը պահպանվել են ջրամբարների ցածրադիր եզրերը պատնեշող ցիկլոպային շարվածքի մնացորդները։ Այդ կարգի ջրամբարներից է, օրինակ, Քար լիճը, որը 12 հեկտար մակերես ունի և շուրջ ութ մետր խորություն։ Այդ լճից, հատուկ կառույցների միջոցով, ջուրը հոսել է երկու հունով, որոնցից մեկն ուղղված է դեպի հարավ-արևելք՝ հետագայում միանալով Արքաշեն ձորին, իսկ մյուսը՝ հարավ-արևմուտք։ Տեղանքում մնացած որոշակի հետքերն ապացուցում են,

---

1 *Տե՛ս* Н. Я. Марр, Я. И. Смирнов, Вишапы, «Сборник Гос. академии история материальной культуры», т. I, Л., 1931.

2 *Տե՛ս Ա. Քալանթար, Մի հնագույն ջրաբաշխական սիստեմ խորհրդային Հայաստանում. Տեղեկագիր ՀԽՍՀ պատմության և գրականության ինստիտուտի, II գիրք, Երևան, 1937, էջ 171—194։*

որ ժամանակին Վար լճի ջրերի մի մասը տեղափոխվել է վերից վար կասկադաձև դասավորված ջրամբարները, որոնք կառուցված են ոռոգիչ ցանցի առուների ընթացքի վրա՝ սկսած Արագածի գագաթնամասերից մինչև Արարատյան դաշտը։ Լճի հարավային եզերքին նկատվում են հնագույն արհեստական պատվարների հետքեր[3]։

Արագածոտնի ոռոգման ողջ համակարգը հիմնականում կապված է տեղանքի սայմանների հետ և թելադրված է ռելիեֆի առանձնահատկություններով։ Ջրաբաշխական ցանցի համար օգտագործված են տեղանքի բնական հարմարությունները՝ ջրհավաք տեղերը, որոնց ցածրադիր մասերում արհեստական պատնեշներ են կառուցվել։ Այդպիսով ստեղծվել է ջրանցքների, բնական ու արհեստական լճերի և ջրամբարների մի ամբողջ համակարգ, որը տարածված է Արագածի հարավային լանջերում, Արքաշեն և Ամբերդ գետերի միջև։ Ջրային ցանցի մանրամասն ուսումնասիրության հիման վրա պրոֆ. Ա. Քալանթարը եկել էր այն եզրակացության, որ դա նախաուրարտական շրջանի կառույց է։ Նա կազմել է այդ ցանցի սխեման (տե՛ս նկ. 1)։

Իր այդ աշխատանքի մասին պրոֆ. Քալանթարը 1936 թ. զեկուցում է կարդացել Երևանի պետական համալսարանում։ Զեկուցմանը ներկա եղող ֆիզիկոս, պրոֆ. Անժուրը հայտնել է նրան, որ Այղր լճի շրջակայքի բլուրներից մեկի վրա իրեն հայտնի է մի մեծ քար, որի վրա եղած փորագրությունները հիշեցնում են պրոֆ. Քալանթարի հրատարակած ակնաչափական սխեմայի վրա ցույց տրված ջրանցքներն ու ջրամբարները։

Պրոֆ. Անժուրը մեզ հաղորդել է, որ պրոֆ. Քալանթարը Արագածոտնի ոռոգման համակարգի հետազոտական տվյալների հիման վրա իր կազմած սխեմա-քարտեզի մանրամասները համեմատության մեջ դնելով Այղր լճի մոտ գտնվող քարի փորագրումների հետ, հանգել էր այն եզրակացության, որ դրանք քարտեզագրական պատկերումներ են և ներկայացնում են Արագածոտնի նախնադարյան ջրաբաշխական ցանցը։ Իր կազմած գծագիրը, որ ներկայացնում էր Արագածոտնի արևելյան հատվածի ոռոգման նախնադարյան համակարգը, պրոֆ. Ա. Քալանթարը համեմատել էր հայտնաբերված քարի վրայի փորագրումների հետ և եզրակացրել, որ դրանք ընդհանուր գծերով, ինչպես և առանձին մանրամասներում, համընկնում են և որ քարի վրա փորագրված է Արագածոտնի նախնադարյան ոռոգման համակարգի քարտեզը, ըստ որում, նրա կարծիքով, քառակուսի փորագրումները պատկերել են արհեստական լճերը, իսկ շրջանաձևները՝ բնական լճակները։ Նա հավանական է համարել նաև, որ երկրաչափական տեսքի այդ փորագրումները ցույց են տալիս բնակավայրեր։

Մասնագետներից կազմված մի խումբ, պրոֆ. Հ. Անժուրի առաջնորդությամբ, որին հայտնի էր վերոհիշյալ քարի տեղը, 1950 թ. սեպտեմբերին որոնումներ կատարեց Այղր լճի շրջակայքում։ Սակայն անցել էին երկար տարիներ, և հայտնաբերողը այդպես դժվարությամբ էր կողմնորոշվում Այղր լճի մերձակա բազմաթիվ բլուրների շրջապատում։ Երկարատև ու մանրակրկիտ որոնումները անհետևանք անցան, սակայն քարտեզ-քարը փնտրելու աշխատանքները մենք հետագայում չդադարեցրինք։

---

3 Տե՛ս Գ. Շիրմազան, Դրվագներ Հայաստանի ոռոգման պատմությունից, Երևան, 1962, էջ 50։



Արագածի Ջրաբաշխական Սիստեմի պլանը (=չափով).
.I VII գլխ. ջրահավաքներ
I 10 մագիստրալ առուներ
O արհեստական լճեր.

Նկ. 1

Երկարամյա ուսումնասիրությունները 1969 թ. մեզ բերեցին Մեծամոր գլրի մոտ՝ վերին Զեյվա բնակավայրից մեկ կիլոմետր հարավ-արևմուտք, Այդր լի հակադիր կողմը (տե՛ս նկ. 2)։ Բլրի գագաթնամասի մոտ հայտնաբերվեց վերոհիշյալ քարը՝ նախնադարյան պիկտոգրաֆիկ գծագրումներով, որի երկա-



Նկ. 2. Բլրի ընդհանուր տեսքը։

ությունը 7.2 մետր է, լայնությունը՝ 3,8 մետր։ Քարն աննշան թեքություն ունի դեպի հարավ, իսկ նրա դեպի հյուսիս նայող մասը մոտ մեկ մետրի չափ բարձրանում է քարի մակերևույթից։ Քարի մակերեսը բավական լայնատարած է, սակայն գծագրությունը գրավում է վեց մետր երկարություն և երեք մետր լայնություն։ Դեպի հարավ նայող մասում երեք մետրից ավելի ցած եղած փորագրությունները ոչնչացել են։ Քարի հյուսիսային և հարավային մասում կա չընթերցված հիերոգլիֆ մակագրություն։ Ջրանցքներ պատկերող գծերը սկսվում են քարի դեպի հյուսիս նայող մասից և ձգվում են դեպի նրա հարավային մասը (տե՛ս նկ. 3)։

Նկ. 3. Քարի վրա կատարված փորագրությունների ընդհանուր տեսքը։

---

4 Դրա նշանագրերից մեկը նման է փյունիկյան-եգիպտական «մյոմ» դաղափարագրին, որ ընթերցվում է «ջուր»։

Քարի փորագրությունների համեմատությունը մեզ հասած հնագույն քարտեզների (օրինակ՝ Բաբելոնի բաբելոնի, գերմանացի քարտեզագետ Կիպերտի գետային ցանցի գծագրումների, Բուսաստանի «Մեծ գծագրի» ու «Սիբիրի քարտեզի», ինչպես նաև Հեկաթեոսի աշխարհի քարտեզի) հետ հիմք է տալիս մեծ հավանականությամբ ենթադրելու, որ դրանք, իրոք, ջրաբաշխական համակարգ են պատկերում։ Քարի թեք մակերևույթի շնորհիվ տեղումների ջրերը փորագրված առվակներով հոսել են ցած, առանց մեծ վնաս պատճառելու գծագրությանը։ Երկար դարերի ընթացքում այդ փորագրությունները որոշ չափով հողմահարվել են, իսկ որոշ մասերում ջարդվել, սակայն գծագրումների հիմնական կմախքն ու մանրամասները պահպանված են։ Քարի վրա փորագրված առվակները, օրամբարները ու ենթադրական բնակավայրերը երկրաչափական կանոնավոր տեսք և կանխամտածված դասավորություն ունեն։ Այդ բոլորը, ինչպես ջրանցքների աշխարհագրական տեղաբաշխությունն ու քարի մակերևույթի հղկվածությունը, աներկբայորեն հաստատում են, որ դրանք ձեռքի աշխատանքի արդյունք են և ոչ թե բնության խաղ։

Տոպոգրաֆիական բարտեզի օժանդակությամբ մեր կատարած դաշտային հետազոտությունները, ինչպես նաև մանրամասների համեմատությունները քարի վրա փորագրված գծերի հետ, այն եզրակացության հանգեցրին, որ քարի վրա, իրոք, գծագրված է Արագածոտնի հնագարյան ոռոգման ցանցի քարտեզը, ինչպես որ ենթադրել էր պրոֆ. Ա. Քալանթարը։ Դաշտում կատարած մեր հետազոտությունը պարզեց նաև, որ նախնագարյան ջրանցքների համար օգտագործվել են տեղանքի բնական այն հեղեղատներն ու ջրէջքները, որոնք գտնվելիս են եղել տարվելիք ջրանցքների ուղղության վրա. ջրամբարները տեղաբաշխված են կասկադի եղանակով տարբեր բարձրությունների վրա, հաջորդականորեն։ Ջրաբաշխական նմանօրինակ համակարգի առկայությունը՝ արհեստական ջրամբարների ու ջրանցքների նպատակային տեղաբաշխմամբ, վկայում է գյուղատնտեսական մշակույթի և շինարարական արվեստի բարձր մակարդակի մասին։

Մենք համեմատել ենք փորագրված ոռոգման ցանցի բոլոր ուղղություններն ու մանրամասները այդ դաշտի ներկայիս ջրատարների և ջրաբաշխական համակարգերի հետ։ Այդ ջրատարներից շատերի հուներն են մնացել միայն, դրանցով մի ժամանակ ջուր է հոսել, իսկ ներկայումս գարնան տեղումների ու ձնհալի ջրերն են երբեմն հոսում շատ կարճ ժամկետով, սակայն ջրատարներից մի քանիսը գործում են և մինչև այսօր։ Ինչպես երևում է №№ 4, 5 և 6 քարտեզներից, շատ մեծ նմանություններ են նկատվում քարի վրայի գծագրումների ու ներկայիս ջրատարների ու ջրամբարների միջև՝ ինչպես նրանց տեղադրության, այնպես էլ ընթացքների ուղղության տեսակետից։ Օրինակ, Քարլի ներկայիս եզրագիծը համարյա չի տարբերվում փորագրված քարտեզի ջրամբարի եզրագծից։ Փարաժաուերի ճեղ առաջացած այդ լիճը ոչ մի ուղղությամբ սեղմվել կամ ընդլայնվել չէր կարող, և այդ է պատճառը, որ հազարամյակների ընթացքում նրա եզրագիծը առանձնապես չի փոփոխվել և պահպանել է քարի վրա փորագրված սկզբնական տեսքը։

Քարի վրա փորագրված սիմա-բարտեզի արևելյան սահմանը հանդիսանում են Գեղարոտ և Քասախ գետերը, իսկ արևմուտքի փորագրումները վերջանում են Մաստարայի սելավատարով։ Արևելքում ջրանցքներից առաջինը սկիզբ է առնում Գեղարոտից, անցնում է ներկայիս Արագած (Ղազնաֆար),

Վարդաբլուր (Շիրազալա), Բազարջուղ, Արտաշավան, Օհանավան ու Կարբի, ապա Մուղնի բնակավայրերի դաշտերով և շարունակվում դեպի հարավ (քարի այդ մասը մաշվել է և ներկայումս անհայտ է մնում հոսքի հետագա ուղղությունը)։ Փորագրված սխեմա-քարտեզն ամենարևմտյան ջրանցքի (Մաստարա սելավատարից արևելք) հյուսիսից-հարավ ձգվող ընթացքը համատեղվում է, այսպես կոչվող, «Թալինի» ջրատարի հետ, որը սկիզբ է առնում ներկայիս Ահագչի բնակավայրին մերձակա վորրիկ լճի մոտակայքից, անցնում է Ոսկեթաս, Ակունք, Վերին ու Ներքին Թալին բնակավայրերի գաշտերով և հասնում է, այսպես կոչվող, «Թալի ձորը»։ Ներկայումս օգտագործվում են այդ մայրուղու վրա եղած նախնադարյան երեք ջրամբարները (№ 5 տոպոգրաֆիական քարտեզում դրանք նշված են 1, 3 և 7 համարների տակ)։



Նկ. 4. քարի վրա կատարված փորագրությունների սխեման։

Նախնադարյան սխեմա-քարտեզի վրա փորագրված ոռոգման ցանցի մնացած ջրանցքները նույնպես համընկնում են տեղանքի ջրատարների կամ նրանց հետքերի հետ. այսպես, արևելքից-արևմուտք համընկնում են՝ ներկայիս Արտաշավան, Նազբվան, Անգարսակ, Արքաշեն, Ամբերդ, Կաշկա, Դիան, Ադարակ, Նարիշա, Զաքարի, Ղիարեթի, Ղաթին, Մեհրիբան, ինչպես նաև Արջաձոր, ապա Խորուն և Թալին կոչվող 16 ջրատարները՝ համապատասխան հաջորդականությամբ ու տեղանքի մանրամասնությամբ[5]։ Այդ համընկնումների մասին կարելի է դատել միմյանց հետ համեմատելով № 4 և № 5 քարտեզները։

Նախնադարյան քարտեզի այն ջրանցքը, որ փորագրված է Ամբերդից անմիջապես արևմուտք և ձգվում է Արագածի դագաթնամասից մինչև Արարատյան դաշտը, ներկայումս ջրատար է միայն գարնանը, այն էլ շատ կարճ

5 Արագածի հարավային բարձունքներում ներկայումս մշտական բնակիչներ չկան, իսկ եկվորների հայտնած տեղանունները միշտ չէ, որ համապատասխանում են իրականությանը։

ժամանակով։ Բնակիչները այդ ջրատարը անվանում են «Կաշկա»։ Նա սկիզբ է առնում Արագածի հարավ-արևմտյան լանջերից, ինչպես որ փորագրված է քարի վրա, սկսվելով այն լեռից, որ գոյություն ունի նաև ներկայումս և կոչվում է «Բաբուռ»։ Ներկայիս ջրատարը այդ ակունքից այժմ ջուր չի ստանում, ըստ երևույթին՝ լճի մակարդակի իջեցման և նրա դեբիտի փոքրացման հետևանքով։ Քարի փորագրումների համաձայն, այդ ջրանցքը վերին հոսանքում բաժանված է եղել երկու վտակների, որոնք որոշ տարածություն առանձին-առանձին անցնելուց հետո միացել են ու կազմել մեկ ջրանցք։ Կաշկա ջրանցքը տեղանքում ունի այդ բաժանումն ու միացումը (տե՛ս քարտեզ № 5)։ Հետազոտված ջրատարը հարավ-արևմտյան ուղղություն ունի և հոսել է ներկայիս Լեռնարոտ բնակավայրի հողերի սահմանով։ Կաշկա ջրատարի ափերը ստորին հոսանքում ցածրանում են, և ջրանցքը, հարթավայրում բաժանվելով երկու առվակների, հետզհետե խորշում է։



Նկ. 5. Արագածոտնի ոռոգման ժամանակակից համակարգի քարտեզը։

Կաշկա ջրատարից արևմուտք «Գյան» ջրատարն է, որ ժամանակին գործող ջրանցք է եղել, իսկ ներկայումս ջուր է ունենում գարնանը միայն, հորդառատ տեղումների ժամանակ։ Այդ ջրատարը ընդհանուր գծերով համապատասխանում է քարի վրա ներկայացված ջրանցքին և՛ ուղղությամբ, և՛ տեղադիրքով։ Դիան ջրատարի վերին հոսանքում նկատելի են համեմատաբար խոշոր ջրամբարի հետքեր։ Տեղանքի ուսումնասիրությունից պարզվեց, որ այդ ջրանցքը վերին հոսանքում ձնհալի պահեստված ջրերով ոռոգել է ներկայիս Դիան բնակավայրի սերիտորիայի համեմատաբար հարթ տարածությունները, իսկ ստորին հոսանքում պահեստված ջրերը օգտագործվել են Արարատյան դաշտում, սակայն նրա հետագա ընթացքը քարի վրա հնարավոր չէ պարզել։ Ներկայումս գոյություն ունեցող ջրատարը, անցնելով Թալիշ գյուղի հողօգտագործման սահմանները, բաժանվում է վտակների և իջնում ցած, ուղղություն ունենալով դեպի Հոկտեմբերյան շրջանի հողատարածությունները։

Արագածոտնի ոռոգման համակարգի հաջորդ ջրանցքը, որ հնում ձյան հալոցքի ջրերն է ամբարել վերին հոսանքում, ներկայումս նույնպես ջրատար

է, որը այժմ վերին հոսանքում կոչվում է «Ագարակ», իսկ ստորինում՝ «Նարիշտ»։ Ագարակի և նրա գլխամասի աղբյուրների կապտաժի միջոցով ներկայում, կառուցված է ջրմուղ՝ Թալինի շրջանի մի քանի գյուղերին խմելու ջուր մատակարարելու նպատակով։ Նարիշտ անունը կրող այդ ջրատարի ընթացքով, Կաքավաձորի մոտակայքում, նկատելի են հնագույն ջրամբարի հետքեր, որոնց տեղադիրքը կարծես թե համապատասխանում է քարի վրա պահպանված գծագրությանը։ Այդ ջրատարով հոսող ջրերը օգտագործվել են ներկայիս Թալինի շրջանի համեմատաբար հարթ տարածությունները ոռոգելու համար։

Փորագրված քարտեզի այն երկու ջրանցքները, որ նախնադարյան շրջանում ոռոգել են ներկայիս Վերին ու Ներքին Սասնաշեն ու Բազմաբերդ բնակավայրերի հողային տարածությունները, այժմ միայն գարնանային հեղեղների ժամանակ են ջուր ունենում։ Տեղի բնակիչները այդ ջրատարներից արևելյանը անվանում են «Զաքարի առու», իսկ արևմտյանը՝ «Զիարեթի»։ Այդ երկու ջրանցքները, ինչպես որ փորագրված են քարի վրա, վերին հոսանքում երկու ջրատարով են հոսել, սակայն միջին հոսանքում դրանք ունեն միացումներ, մնալով հետագայում բաժանված երկու ջրանցքների։ «Զաքարի առուն» ընթանում է Վերին Բազմաբերդ բնակավայրի արևմտյան եզրագծով, ապա շարունակվում է Ներքին Բազմաբերդի արևելյան սահմանով։ «Զիարեթ» կոչվող ջրատարը բաժանումից հետո հոսում է Ներքին Սասնաշեն բնակավայրի արևելյան եզրով և շարունակվում անմշակ հողատարածությունների մեջ։ Ներքին Սասնաշենից ցած գտնվող նախնադարյան ջրամբարը, որ քարի վրա նշված է քառակուսի եզրագիծ ունեցող փոսով, համապատասխանում է ներկայումս գործող № 14 ջրամբարին (տե՛ս քարտեզ 5)։ Այս ջրամբարը, ըստ երևույթին, հաստատում է, որ քարի վրա փորագրված համակարգի քառակուսի եզրագիծ ունեցող փոսերը արհեստական ջրամբարներ են։

Քարի վրա փորագրված են նաև երկու այլ ջրանցքներ, որոնք Արագածոտնի նախավերջին ոռոգիչներն են, բացի «Թալին» ջրանցքից, որի մասին խոսվեց վերևում։ Նախնադարյան այդ երկու ջրանցքները աշխարհագրական տեղադիրքով, ջրանցքների հաջորդականությամբ, ընթացքների ուղղությամբ, ըստ երևույթին, համապատասխանում են ներկայիս «Մեհրիբան» և «Զաթին» ջրատարներին, որոնք վերին հոսանքում միացած են եղել որպես մեկ ջրանցք, ջրի ամբողջ պաշարը ստանալով Արագածի արևմտյան լանջերից, իսկ հետագայում բաժանված երկու վտակների, որոնցից արևելյանը, որ ներկայումս անվանում են Զաթին, հոսում է Դավիթաշեն բնակավայրի արևելյան սահմանով, իսկ արևմտյանը, որ հոսել է ներկայիս Իրինդ ու Կաթնաղբյուր բնակավայրերի արևմտյան եզրերով, կրում է «Մեհրիբան» անունը։ Այս երկու ջրանցքները նախնադարյան քարտեզի վրա ստորին հոսանքում կրկին միացել են միմյանց։ Ջրատարը շարունակվում է հարավ, դեպի Աշնակ բնակավայրի համեմատաբար ավելի փոքր տափարակ տարածությունները և մի քանի ոռոգիչ առուների վերածվելով, ավարտում իր ընթացքը։ Ասա նախնադարյան քարտեզի, Մեհրիբան կոչվող ջրանցքի վրա գծագրված է արհեստական ջրամբար։ Մենք այդ տերիտորիայում հայտնաբերեցինք ջրամբարի հետքեր (№ 5 քարտեզում նշված են 9 և 10 համարների տակ)։ Այդտեղ ներկայումս կառուցված են համեմատաբար ավելի փոքր ջրամբարներ, եթե քարի պատկերումներն ընդունենք մասշտաբավորված։

Քարի վրա, այդ ջրամբարից ցած, նշված է շրջանատեսք մեկ այլ մանրամասն, որը սակայն կարող է և բնակավայր լինել. տեղանքում այդ գծ-

վանքը մոտավորապես համընկնում է Կաթնաղբյուր գյուղի ներկայիս գրված տերիտորիային։ Քարի վրա այդ ջրանցքի հարավային հատվածում նշված է մի այլ արհեստական ջրամբար ևս, սակայն մեր որոնումները այդ մասում դրական արդյունքի չհանգեցրին։ Այդ երկու ջրանցքներով այժմ նույնպես ջուր չի հոսում, միայն գարնանը հորդառատ անձրևները շատ կարճ ժամանակով ջուր են մատակարարում այդ ջրատարներին։

Արագածոտնի ոռոգման համակարգի արևմուտքում գտնվող նախավերջին երկու ջրանցքները անցնում են Ակունք բնակավայրից սկսած մինչև Թալինի դաշտերը, միմյանց զուգահեռ ուղղությամբ։ Այդ ոռոգիչները ժամանակին օգտագործվել են ներկայիս Թալին և Դավիթաշեն բնակավայրերի միջև ընկած տարածությունների ոռոգման համար։ Ջրանցքներից արևելյանը, որ անցնում է ներկայիս Կարմրաշեն բնակավայրի արևմտյան եզրերով, հետագայում թեքվում է հարավ և Ն. Թալինի դաշտերում բաժանվում մանր առուների։ Տեղացիները այդ ջրատարը անվանում էն «Արջաձոր»։



Նկ. 6. քարի վրա փորագրված համակարգը ներկայիս տեղանուններով։

Երկրորդ ջրանցքը, որ անցնում էր Արջաձորի արևմտյան կողմով՝ ներկայիս Ակունք ու Կարմրաշեն բնակավայրերի սահմանաեզրով, տեղացիները անվանում են «Խորուն»։ Հարավում դա վերջանում է ջրամբարով, սակայն տեղում այդ ջրամբարը չկարողացանք հայտնաբերել։

Արագածոտնի նախնադարյան ոռոգիչ ցանցը, հավանական է, որ ոչնչացվել է բոլորովին ցեղերի արշավանքների հետևանքով։ Ուրարտական սեպագիր արձանագրություններում չեն հիշատակվում ոռոգիչ համակարգի այն ջրանցքները, ջրամբարները ու կառույցները, որոնք գործելիս են եղել ձնհալի ջրերի պաշարի հիման վրա։

Արագածոտնի ջրաբաշխական համակարգի համարյա յուրաքանչյուր հանգուցային կետում հայտնաբերվել են ջրի պաշտամունքը մարմնավորող, այսպես կոչված, «վիշապները», որոնք ունեն 4—5 մետր երկարություն և 60—

50 սմ տրամագիծ։ Այդպիսի քանդակներ են հայտնաբերվել նաև Քար լճի մոտակայքում։ Արագածի գիտական կայանի աշխատողները, հաշվի առնելով այդ ձկնակերպ քանդակների գեղարվեստական ու հնագիտական նշանակությունը, ցածի ջրամբարներից այդպիսի մի վիշապ են տեղափոխել, որը ներկայումս կանգնեցված է բետոնե պատվանդանի վրա՝ ուղղակի Քար լճի ափին։

Ուսումնասիրությունները հաստատում են, որ «Արագածի վրա հայտնաբերված ձուկ-վիշապները աղերսված են ուրարտական բարդ համակարգի հետ և որ այդ համակարգի համար հիմք են ծառայել Արագածի ձնհալի ջրերը»[6]։ Բացի Արագածոտնից, ջրի պաշտամունքին նվիրված նման քանդակներ են հայտնաբերված նաև Վիշապալճի (Ծովամախանի) շրջակայքում, Գեղարդի նախնադարյան ուրարտական ցանցի ջրամբարների ու ջրանցքների մոտ։

1963 թ. Գառնի ամրոցի պեղումների ժամանակ հայտնաբերվել է կիսով չափ ջարդված խոշոր, երկար սալաքար, որի արտաքին մակերևույթի վրա գծագրված էին վիշապի բարձրաքանդակ նշանները։ Այդ հատվածի վրա, որ գլխամասն է ներկայացնում (1,87 մետր երկարությամբ և 0,70 մետր տրամագծով), կա ուրարտական սեպագիր արձանագրություն, որ փորագրված է ավելի ուշ ժամանակներում, քան վիշապի դծվածքը, որովհետև ուրարտական այդ մակագրությունները կատարված են վիշապը պատկերող բարձրաքանդակ փորագրությունների վրա։ Հնագետների կարծիքով քարը չէր կարող բերված լինել Գեղամա լեռներից. ենթադրվում է, որ այն կանգնեցված է եղել Գառնիի քարաժայռերի միջից բխող, հզոր դեբիտ ունեցող աղբյուրների մոտ և կամ դրանցից սկսվող ջրանցքների մոտակայքում։

«Գառնիի վիշապ քանդակի հայտնաբերումը,— գրում է պրոֆ. Բ. Առաքելյանը,— որի վրա գոյություն ունի VIII դարի (մ. թ. ա.) առաջին կեսի ուրարտական սեպագիր մակագրություն, որոշակիորեն լուսաբանում է հնադարյան այդ առանձնապես հետաքրքրական հուշարձանների ժամանակաշրջանը։ Պարզվում է, որ դրանք ստեղծվել են Ուրարտական պետության առաջացումից, ինչպես և ուրարտացիների՝ դեպի Հայկական լեռնաշխարհի հյուսիսային սահմանները ներխուժելուց շատ ավելի վաղ ժամանակներում, մեր թվագրությունից առաջ մոտավորապես երկրորդ հազարամյակի կեսերին՝ XVII—XVI դարերի ընթացքում, կապված լինելով ջրի պաշտամունքի հետ»[7]։

* * *

Զեյվայի բլրի քարի վրա հայտնաբերված ուրարտական համակարգի նախնադարյան փորագրված քարտեզի և դրա ընդգրկած տերիտորիայի մեր ուսումնասիրությունից կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

1. Արագածոտնում հայտնաբերված նախնադարյան ուրարտական ցանցի հետքերն ու մինչև այժմ գոյություն ունեցող ջրատարները համապատասխանում են քարի փորագրություններին, ինչպես ուրարտական ցանցի աշխարհագրական տեղաբաշխմամբ, առանձին ջրատարների ուղղություններով, այնպես էլ ջրամբարների սահմանագրերով և շինարարական կառույցների քանակով։

6 Տե՛ս Б. Б. Пиотровский, Вишапы, каменные статуи в горах Армении, Л., 1939, էջ 37—38։ Տե՛ս նաև Մ. Աբեղյան, Վիշապներ, Երևան, 1941։

7 Տե՛ս Б. Н. Аракелян, Урартская клинообразная надпись из Гарни. «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 2, էջ 293։

2. Քարի վրա ընդգրկված է Արագածոտնի տերիտորիան՝ Քասաղ գետից մինչև Մաստարայի սելավատարը (այդ տարածությունը քարի վրա ներկայացված է 5,8 մետր երկարությամբ, որը համապատասխանում է տեղանքի 45 կիլոմետրին) և Քար լճից մինչև Արարատյան դաշտը (որը քարի վրա բռնում է 3 մետր, իսկ տեղանքում՝ 26 կիլոմետր)։

3. Քարի վրա փորագրված բոլոր տասնվեց ջրանցքները հյուսիսից հարավ ուղղություն ունեն, ինչպես որ Քասաղ գետից մինչև Մաստարա սելավատարը հայտնաբերված տասնվեց ջրատարների հետքերը։

4. Ուրարտական նվաճումից շատ առաջ Արագածոտնի՝ ձնհալի ջրերն օգտագործող ոռոգման համակարգը արդեն դադարել էր գործելուց[8]։

5. Քարի վրա փորագրված քարտեզը վկայում է, որ Արագածոտնի նախաուրարտական տեղաբնիկներն են առաջինը, որ այստեղ կիրառել են ոռոգելի հողագործություն, այդ նպատակի համար կառուցելով ջրաբաշխական բարդ համակարգ, որն օգտագործում էր Արագածի ձնհալի ջրերը։

ВЫГРАВИРОВАННАЯ СХЕМА ДОУРАРТСКОЙ ИРРИГАЦИОННОЙ СЕТИ АРАГАЦОТНА

М. М. ХАЧАТРЯН

(Резюме)

На южных склонах Арагаца в 30-х годах была обнаружена древняя ирригационная сеть, которая обеспечивала поливное земледелие северо-восточной части Араратской долины талыми водами снежных вершин Арагаца. По следам строительных остатков этих древних каналов, водохранилищ и искусственных сооружений, а также характерным образованием рельефа были выявлены направления каналов, местоположения водохранилищ и, кроме того, составлена схема этой древней ирригационной системы.

В 1969г. на холме у с. Зейва, в 35 км к западу от столицы Армении, нами был вновь обнаружен весьма крупных размеров камень с пиктографическими изображениями и выгравированными извилистыми линиями. Об этом камне в начале 30-х годов сообщил проф. Ереванского государственного университета А. Анжур, а выгравированную на нем схему исследовал А. Калантар, выдвинувший предположение о том, что на камне изображена схема ирригационной сети Арагацотна.

Выгравированные подробности на камне нами были сопоставлены со схемой древней ирригационной сети, а в натуре исследованы высохшие русла и следы древних каналов, водохранилищ и других сооружений. Сопоставления показывают, что обнаруженные на камне извилистые линии, по всей вероятности, представляют схему размещения ирригационной сети, существовавшей в доурартский период на территории исторической области Арагацотн.

---

8 Ուրարտացիները Արարատյան դաշտում ոռոգելի հողագործությունը վարել են ջրաբաշխական այլ ցանցի հիման վրա՝ էջմիածնի, Շահարի, Սարդարապատի, որոնք սնվում էին ոչ թե Արագածի ձնհալի ջրերով, այլ Հրազդանի, Քասաղի և Արաքսի ջրերով և կրում էին մշտական բնույթ։